

Ս. ՂԱԶԱՐ ՎԱՆՔԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՅԱՄՔԱՊԱԿՆԵՐԸ



ՎԵՐԱԳԻՐԻՍ Հնկատուի թէ եւրոպական կեդրոն քաղաքի մը մէջ՝ իր դիրքով ու գործունէութիւնով հայութեան պատուարհր այս սիրուն կղզեակին մենաստանը պնտուած է յախճապակեայ հմայիչ քարերով, ինչպէս շատեր հայաշխարհի երբեմնի դարաւոր վանքերէն ու եկեղեցիներէն. ո՛չ, Մխիթարեան մեղուաշան Միաբանութիւնը՝ հակառակ իր անբաղդատելի կերպով արդիւնաշատ գործունէութեան՝ երբեք այդ տեսակ մտածումի մը չէ յանձնուած երկու դարէ ի վեր՝ ուր զոյուլթիւն ունի։ Եւ ասոր մէջ մեղադրանքի մը ամբողջութենէն զերծ կը մնայ Միաբանութեան անցեալ սերունդը, եթէ հաշուի առնենք իրեն վիճակող բաժինը ընդ հանուր տգիտութենէն՝ որ այս հրաշազան Արուեստին զնահատումին շուրջ տիրած է անցեալին մէջ, ու հիմա՝ նոյն իսկ մեր մտատրական դասին քով։

Այսօր ո՛րքան մեծ բախտ մը եղած պիտի ըլլար, եթէ վանքի հիմնարկութեան առնէն իսկ որմնազարդուած ըլլար անոր տաճարը համակ՝ նոյն ժամանակի (1717) կուտինահայկական արտադրութիւններով, որոնք խստապահանջ ու զօտարահաճ յանձնարարութեան մը համեմատ կրէին պատշաճ երանգներ, ծաղիկներ, դրոշմներ, նկարներ ու արձանագրութիւններ հայեցի։ Հաւակնալի է որ ատիկա պիտի կազմէր անտաքիւտ զանձ մը, և վանքին ու Հայութեան փառքը կրկնապէս պանծացնող արտայայտութիւն մը՝ այն բոլոր օտար քննասերներուն ու զբօսաւէրներուն առջև որոնք չեն դադրիր շարունակ այցելելէ այս յաւէտ ապստոլ աղբիականեան դշխոյի լոյծ ու գիրգ լանջին վրայ արթնափառ ու հեռատես Մխիթարի մը հաստատած բոսորագեղ հնոցը։

Եւ սակայն գտնուած են գիտակից Մխի-

թարեաններ ալ՝ որոնք իրենց խուզարկու պոռոյտներուն տեսն հայկական յախճապակեայ անօթներ, թիւով 7, ընձեռած ու խնամով զետեղած են վանքին թանգարանը, ուր անոնց հանդիպելն ու ցուցակազերելը դարձեալ հաճոյք մը եղաւ ինձի համար, հաճոյք՝ զոր կը բաժնեմ «ԲԱԶՄԱՎԻՊ»ի հետաքրքրը ընթերցողներուն հետ։

1.

Կ Ո Ն Ք Ս Ա Փ Ր Ի Զ Ի


ԹՃԳ = 1744

Յօրիժապակիի (faïence) կոնք Սափրէլի։ — Կրա՛ ճերմակ։ — Մեծոքիւն. շրջանակ 82 սնդմ. Տրամագիծ 26, խորութիւն 5-6 սնդմ. — Զե՛ թափ մը պէս խոր կեդրոնի մը վերէն՝ եզերքէն բոլորշի պսակ մը կը դառնայ, ինչպէս կ'ըլլան արդէն այս օրինակ կոնքերը ամէն տեղ։ — Հանգամանք. պսակին վրայ 2 տեղէն բեկեալ, մէկը 17, միւսը 13 սնդմ. երկայնքով, որոնք խնամով փակցուած են իրենց մեկնակէտերուն, թողլով թեթեւ վերջի մը հետք միայն։ — Գոյն ու ծաղիկ. յատակագոյն է ճերմակ. լայնադիր պսակին եզերքը բոլորուն է սև նօսրգիր յիշատակարան մը, որուն երկու ծայրերը կը յարակցին չորս խաչանիշերով։ Ասոր կը յաջորդէ զոյգ մը նուրբ կապոյտ շրջագծերէ ետք ծաղկեզարդում մը, ուր միւնեոյն ծաղիկը՝ որ նախ կանաչ ատամնաւոր՝ յետոյ սարդիոն ու կապոյտ, դեղին ու սև՝ չորս երանցներով բաժնի գեղեցկութիւն մը ունի, երեքնուերով պատշաճապէս կը լեցնէ այդ համակեդրոն շրջանակը։ Խորքին մէջ՝ կեդրոնը բռնած է ձուկ մը՝ որուն կտր գլուխն ու լայնալիճ երախը կը մնան աններկ՝ յատակի գոյնով, բայց աչքն ու երկու ականջները կ'միտարեայ են և մարմինը կանաչ. առնիկա ամփոփուած է մահիկի մը մէջ, որ աղիւսակաձև սև զիծերով կապոյտ գետին մը կը կրէ։

Կոնքին արտաքինն ալ պննուած է գեղայօրէն. նոյն այն ատամնաւոր ծաղկեղարը՝ որ հրեք անգամի զուգորդութիւն մը ունի ներսը՝ հոս պսակին տակը կրկնութեան մը միայն ենթարկուած է. խորքը ձեւացնող 6 սանդիմի միջոցն ալ արտազարգումէ մը զուրկ չէ. իսկ տակի մերկութիւնը կը ծածկեն համակեղոն գոյգ

րիւր գոյներու խառնուրդէ մը և կամ քուրային ճաթուտեղներէ, որոնք յատկանշական թերութիւններն են արդի արտագրութիւններուն:

Կերտող վարպետը կը թուի ըլլալ յիշատակուած «Դաւիթի որդի Յովհաննէս»ը, որ իր թրքաբարբառ արտայայտութիւնով և աւելի Կուտինայի յատուկ մաղթանքովը,



շրջագիծեր՝ կապոյտ երանգով:

Յիշատակագրութիւն. — Մէկ տողի վրայ « ԹՎՐՆ ՀԱՅՈԾ Ծ Զ Պ Ե Զ ԵՆԷՍՐՆՈՒ ԵՄԱՅԻՍՐՆ Ե Ր ԸՆՈՒ ԵՐԿՈՒԶԱՐԹԻ ԿՈՒՆ ԵԱԳԻՄՐՆ ՏՐԸ Ե ՎՈՒ ԼԷՅԻՆ ԵԱՎԻՏՐՆ ՕՐԹԻ ՕՀԱՆՆԷՍՐՆ. »:

« Վէ պու սաղլիկեղայ զօրլանսն ամէն »:

Գործատեղի և ժամանակ. — Այս կոնքը Կուտինահայկական գործարաններէ ելած յաջող արտագրութիւն մըն է ԺԸ. զարու առաջին կէսին պատկանող, ինչպէս յիշատակագրութեանն կը հասկցուի արդէն: Յաջողութիւնը կը կայանայ թէ՛ զարդաբանքի ընտրութեան ու զետեղումին և թէ զրուագումին (glacure) ու թրծումին մէջ, այնպէս որ անոր պէտք անկարելի չի պոտոս.

սաղլիկեղայ դրամներ, կու գայ հաստատելու, թէ Կուտինահայութեան ներկայ թրքախօսութիւնը իր սկզբնաւորութեան մէջ էր արդէն այն ատեն:

2.

Խ Ն Կ Ա Մ Ա Ն

ՌՃԶԹ = 1740

Յաիմապակեղայ խնկաման. — Կա՛մ ճերմակ. — Մեծոքիւն. շրջանակ 38 սմ. դ. Բարձրութիւն՝ զուրսէն 9 1/2, ներսէն 6 1/2 սմ. դ. — Ձե՛ պարզ թասի մը ձեւը ունի

աս, բոլորակ յատակի մը վրան բարձրացուած ¹/₃, սնդ. հաստ ուղղահայեաց շըրջապատով մը, որ 5 թեթև հանգոյցներու կը բաժնուի ղուրսի կողմէն — Հանգամանք. ունկն է բեկեալ, որուն երկու ծայրերէն կը մնան 1ական սնդմ.նոց ցըրուածքներ: — Գոյն ու ծաղիկ. կաթնասպիտակ փայլուն յատակի վրայ՝ ներսէն ծաղկեզարդուած է հիանալի կապոյտով

Յակոր: — Թխատակագրութիւն. (Ա տող) « Այս է խունկամանըս սը Սարգիս եկե-
« ղեցին Ած(ատ)ուրի որդի (Բ. տող)
« Ակոպին իշայտակն... Թիվըն ոճձ թ.
« ունիսի ան որըն շինեցաւ »:

Այս խնկամանը խիստ ընտիր գործ մըն է. մեծ յաջողութիւն ցոյց կու տայ մանաւանդ իր կիտուածին ու թրծումին մէջ. այդ տեսակէտներով առաջին տեղը կը



մը. ծաղիկները քմահաճ՝ բայց գիրգ փափկութիւն մ'ունին. ղուրսէն՝ բերնին մօտ կը կրէ բաց սեռով նօսրգգիւր յիշատակագրութիւն մը երկկալոգ, որ ունկին վերի արմատին մէկ կողմէն կը սկսի ու շուրջ բոլորուելով կը հասնի միւս կողմը: Անոր տակը կը ներկայանան հինգ հրեշտակային գլուխներ՝ բաց — կապոյտի մէջ ստուերամած. իւրաքանչիւրը կը գրաւէ հանգոյցի մը կարկառը, ունենալով իր կատարին, ստորոտին ու երկու կողմերուն վրայ մէկ մէկ դեղնաուուն թև, որոնք հաւաքաբար կը խաչաձևուին: — Գործատեղի. Կուտիւնա: — Ժամանակ. ոճձ թ. = 1740: — Կերտոյ վարպետն է Աստուածատուրի որդի

գրաւէ Ս. Ղազարի յախճապակեայ անօթ-ներու կարգին. միայն զարմանքս շարժեց անոր մէջ ձգուած թուոցիկ թուղթի մը ծանօթութիւնը, ուր «բնծայեաց Պր. Մարտի Տամատ» է վերջ կ'ըսուի՝ «շինեալ յեւրպիս 1740 »: ասիկա պատմական ու արուեստագիտական սխալ մըն է: Հ. Ներսէս Սարգիսեան, վենետիկի Մխիթ. Միաբանութեան ներհուն անդամը, որ ԺԹ. դարի առաջին կէսին ուղեորած է հոն, սապէս կը ստորագրէ. « Ճոխ է Եւդոկիա « եկեղեցեօք... նորաշէնք՝ Ստեփաննոս և « Աւետման... իսկ հնաշէնքն են Աստուած « ծածին, Ս. Մինաս, Ս: Լուսաւորիչ, « Քառասուն Մանուկ, Ս. Գէորգ և Ս.

« Յակոբ այրեալ... կուտինացի յախճապա-
 « Կօք պատեալ ոմանց խորանքն և բեմքն » .
 (Քաղմավէպ 1863, նոյեմ., էջ 338)։ Ա-
 նոնցմէ կատ ինծի ծանօթ Ս. Յովհան-
 Ոսկեբերանի և Յովակիմ Աննայի վանքերը
 ունեցած է Եւդոկիան, որոնց բոլորին մէ-
 ջէն կը բացակայի խնկամանին յիշատա-
 կած Ս. Սարգիս եկեղեցիէ, բան մը որ
 եթէ գոյութիւն ալ ունենար՝ դարձեալ
 սոյն անօթին ալը քաղաքէն արտադրուած
 ըլլալը հաւանութիւն չէր գտնել, քանի
 որ մէկ կողմէն յախճապակիի հայրենիքը
 կուտինան՝ երկար ատեն (որուն մէջ կ'իյ-
 նայ ինչորի առարկայ անօթին շինութեան
 թուականը) ունեցած է նոյնանուն եկեղե-
 ցին, որու մասին ընդարձակ յիշատակա-
 գրութիւններ ալ կան Վենետիկի ու Վինն-
 նայի Միխիթ. Ձեռագրիներուն մէջ (Տնն
 Մայր ցոյցակ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեանի.
 էջ 274 և Նոյճ՝ Հ. Յ. Վ. Տաշեանի.
 էջ 777), ինչպէս իմ մէկ ուսումնասիրու-
 թեանս ու ցուցակագրած կուտինական
 պաշտօնութիւններուն (Կրկնքն ալ դեռ ան-
 յայ) և մասնաւորապէս Վիեննայի թ. 518
 ձեռագրերին մէջ, որ ամբողջական
 պատմութիւնն է հռոմէականութիւնը ըն-
 դունած այդ Ս. Սարգիս Եկեղեցիի մո-
 ղովորդին։ Միւս կողմէ՝ փոքր - Ասիայի
 մէջ կուտինան, մասնաւոր վերջին դա-
 բերուն, առանձինն եղած է յախճապակի
 շինող ու զանազան վայրեր արտածող,
 ինչպէս նոյն ինքն Եւդոկիայի ալ, որուն
 կը վկային նաեւ Հ. Ներսէս Սարգիսեանի
 վերոգրեալ տողերը։

Ինծի կը թուի որ Ս. Ղազարի արձա-
 նագրելը յիշեալ վրէպին ենթակայ եղած
 է՝ ընծան ընդունած պահուն, ԺԹ. դարուն,
 կուտինայի մէջ չգտնելով Ս. Սարգիս
 եկեղեցին՝ զոր կործանած են 1840ին,
 տեղը բարձրացնելու համար Ս. Էջմիածին
 վարժարանը, և նուիրողին կամ եկած տե-
 ղին Եւդոկիայի հետ կապ մը ունենալէն։

3.

Պ Ն Ա Կ

ԹԺԿԸ = 1719

Յոսիմապոկեայ պնակ, — Կոստ. ճե-
 մակ։ — Միւսուրիւն. շրջանակ 70, տրա-
 մագիծ 23 սնդմ. — Հանգամանք՝ լաւ։ —
 Գոյն և ծաղիկ. կեղորոն՝ ճերմակ յատակի
 վրայ տարածուած է նկար մը, որուն մէջ
 Յովհաննէս Մկրտիչ՝ զլիսատ, ծնրադիր և
 ձեռները ամբարձիկ շրուշակուած՝ սըր-
 տամալիկ տեսարան մը կը պարզէ. դեղ-
 նորակ ներքնագգեստին վրայէն կ'իջնէ
 կապոյտ պատմունճան մը, զոր կը բծաւորէ
 պարանոցէն վեր անինայ ժայթքող թարմ
 արիւնը բոսոր։ Դեղնաւուն ափսէի մը
 վրան դրուած կտրատ մօրուսաւոր զլուիւր՝
 ուրիշ արիւնը կը ցայտէ՝ ձախ ձեռքին
 մէջն է աջակողմը կանգուն ինքնագոհ
 դահիճին, որուն բոկոտութիւնը սրունքէն
 պատած է նոյնպէս դեղինով, իսկ իրանէն՝
 կանաչ լոզիկով մը՝ զոր կը սեղմէ դեղին
 քամար մը. ասիկա իր աջ թևին տակ կը
 շողացնէ կեռ դաշոյնը՝ որուն գոյնը կապ-
 տաներկ է զանազանուած ըլլալու համար
 իր դեղին երախակալէն։ Դահիճին զլիսա-
 նոցը սաղաւարտածն է, դիմագիւղը յոյր
 և գեղանի, պիտիքը բարակ ու երկար,
 նոյնպէս յօնքերը, որոնց տակէն կողմնակի
 հպարտ նայուածք մը կը զրկէ՝ զոհուած
 անմեղին միւս զին կանգնող նազելաշուք
 Սողովմէին. ասիկա կանանչ տարազ մը
 կը կրէ, կապուտակ կամարով մը գիւղ
 մէջքէն սեղմ, կուրծքը արտածն հոլանի,
 թեզանիքները կապոյտ, ալ թէն կարկա-
 ռուն դէպ ի անապատներու քարոզիչին
 զլիսատ էութիւնը, ձախը՝ կախ, անութիւն
 տակ քանկով սկուտեղ մը։ Դեղնաւորուն
 սպիտակ գուլպաները՝ մերկութիւնը կը սքո-
 ղեն իր սուքերուն՝ որոնք կը հանգչին բար-
 ձրոտն փայտամուճակներու մէջ, և դեղնա-
 րակ թագ մը կը պսակէ իր զլուիւր, օժ-
 տուած Սողովմէի ամ արժանի կանացի
 փափկութիւնով։ Նկարէն դէպ ի եզերք

անյաջող զեղինի մը վրայ սև երկաթազիրով շրջագրուած է յիշատակարան մը, որուն մէջ նշանակուած է «Աբրահամ վարդապետ»ը փակագիրը դրոշմուած է նաև զուրսի կողմը, յատակին ճիշդ կեդրոնը:

Յիշատակագրութիւնն է «Աբրահամ վարդապետին է (բաց) Յովհաննու գլխաւ տունն է (բաց) նրկալիցաւ պատկերս է այս (բաց) թվին ոճկ և ութին»:



Գործատեղի և ժամանակ. — 1719ին՝ կուտինա:

Կերտող. անյայտ:

Այս անօթը, հակառակ իր բարդ զարդանկարին, գոյներու և կիտուածի հրապուր մը չի ցոլացներ. երանգները աղօտ, պղտոր և բծաւոր անցած են, և սակայն մեղի համար շատ թանկագին է ուրիշ տեսակէտով. և այդ այն է՝ թէ կուտինա հայ նկարիչը գլխատումի պարագաները փոխանակ երբայական հին տարագներով և դէմքերով սեթեթեմբու՝ իր տրպարներն ու ձեւերը առած է անմիջական շրջապատէն. գոնէ ես այսպէս կը նկատեմ և կը հաստատմ, թէ ասոնք կատարեալ գաղափար մը կու տան ժիւ. դարի սկիզբները տիրող պարսկահայկական արդուզարդին վրայ, որովհետեւ այն ասան նորեկ գաղութ մը Յիւնայէն՝ եկած է կենդանացնելու

արդէն իսկ Պարսկահայքէն գաղթած և իր պապենի բարբերով ապրող կուտինա հայութեան սովորութիւններն ու ներքին և արտաքին երեւոյթները: Ու ասոնց հետքերը երկարածգուած են մինչև ժիւ. դարի վերջին քառորդը, ուր երբ արբազութիւն մը եկած է ալլափոխելու, մանաւանդ սքողելու իգական ձիւնասպիտակ հոլանիլանջը, որ նկարուած կ'երևի պնակին ալ վրան՝ ժողովրդական հեթանոս շրթները անիծեքած են. —

Թերպի գոյուն զրբլարե, ռափրս օշոտո
[մեմկր.

4.

Պ Ն Ա Կ

ԺԷ. ԴԱՐՈՒ

Յախճապակի փոքր պնակ. — կու՝ ճերմակ. — Մեծոթիւն. շրջանակ՝ 35, տրամագիծ 11 1/2 սնգմ.: — Հսկզամեք՝ լաւ: — Գոյն և ծաղիկ. ճերմակ յատակի վրայ նրբին ցօղուններով կապոյտ ծաղիկ մը, որուն կեդրոնը դէպ ի փակագրութիւն մը կը պարփակէ «Խոյա Սափար» անունը, իսկ ասոր ստորտուն ու բովը թառած են զոյգ մը թռչնիկներ: Պնակին արտաքին յատակը երբեակ ծղօտներ, նոյնպէս կապոյտ, ու իրերամերձ՝ կը ձևացնեն եռանկիւն մը. Ս. Ղազարի արձանագրելը ասոր համար նշանակած է «Ընծայեաց Պր. և Մարտին Թովմանեան. Խոյա Սափարի «հիմնադրի Նոր Զուլայի. ի սկիզբն ժիւ. «Դարու» Եթէ այսպէս արձանագրութիւնը պատշաճեցնենք մենագրութեան ծալլած անունին հետ՝ պէտք կ'ըլլայ այն ատեն ժիւ. դարու սկզբնաւորութեանը տանիլ այս փոքրիկ բայց թանկագին պնակին շինութիւնը: 1610ին «Եհաս ի Վենետիկ... «ազնուատուն Զուլայեցի գործակալ Շա. «հին» Խոյա Սափար որդի Խոյա Էտի. «կարի» կը տեղեկացնէ Հ. Ղ. Աւիշան (Սիսական, Վենետիկ. 1893, էջ 443):

Արդեօք այդ միջոցին է որ այս պնակը մնաց Վենետիկ և ատեն մը յետոյ վիճակացաւ Ս. Ղազարին, — մեզի համար միին է. բայց մեր հետաքրքրութիւնը կը սրէ ուրիշ հարց մը՝ շատ աւելի շահեկան. — Խոջա Սաֆար՝ մեծանուն հայը Զուլպայի էր և ապրած ժ.Չ. — ժ.Է. դարերուն, ուր Գաւիթ Գեղամեցիի զմայլելի չափաբանութիւնով,

Զուլա քաղաք ազնիւ շինած,
Քոջք և սէրայք բարձրացուցած
Եւ գունդգուն ծաղկեցուցած
Հա հիացումն էր տեսողաց.

հոն գերազանցապէս փայլած էին արուեստներ, արհեստներ ու վաճառականութիւն։ Ուրեմն շատ բնականօրէն և հաճոյքով հետեցնել էտքը՝ թէ Խոջա Սաֆարի պնակը արտադրութիւնն է այն ատենի Զուլպայի գործարաններուն՝ կը մնայ գիտնալ թէ ո՞ր և ինչն էր կը գտնուին ներկային իրենց արտադրութիւններէն, ինչ եղած է իրենց արուեստագիտական կիրարկումներու բնորոշ գիծը, և թէ իրենց երկրորդ հայրենիքին՝ Նոր-Զուլպայի մէջ շարունակեցին այս արուեստը և մինչև երբ։ Վիեննացի համակրելի միւլթարեանը՝ Հ. Ներսէս Ա. կիսեան ասկէ տասներկու տարի առաջ՝ Տիգրան Խան Քէլէկեանի հաւաքածոյէն ատնելով հրատարակած էր պատկերը ժ.Բ. դարու յատուկ կապտագոյն պնակի մը, որ իր երկերանգ պարզութիւնով, մենագրութեան գործածութիւնով, գողտրիկ ծր-ղօտներով ու թռչնիկով մեծապէս կը յիշեցնէ մեր սոյն Խոջա Սաֆարի պնակը. արդեօք ասիկա գործն է աշխատանոցի կամ վարպետի մը՝ որ յաջող սերունդը կազմած ըլլայ հին Զուլպայի արուեստագէտներուն... Այս ամենուն մասին կրնան մեզ գոհացնել մեր Պարսկահայ ու Կովկասահայ քննասէները և ծառայութիւն մատուցանել հայ գեղարուեստական շրջող ճիւղի մը պատմութեան։

5.

Ս Բ Ճ Ա Գ Ա Ի Ա Թ

ԺԵ. — ԺԸ. ԴԱՐԵՐ (?)

Յախճապակեայ գաւաթ սուրճի։ — Կա՛մ երմակ։ — Մեծօրիւն. շրջանակ 23, տրամագիծ 17, խորութիւն՝ դուրսէն 4 1/2, ներսէն 3 1/2, սնդմ։ — Հանգամանք՝ լաւ։ — Գոյն յատակի՝ թխորակ երմակ, որուն ներսի կեղորոնը երկգիծ շրջանակի մը մէջ բռնուած է եօթնուոր սիրուն ծղօտով մը, իսկ արտաքինը 3 թանձր ծաղիկներով, ամէնն ալ կապոյտ։ Ասիկա Կուտինական չէ. աւելի մօտ է Խոջա Սաֆարեան պնակի ոճին, որով և կրնայ ըլլալ ժ.Է. — ԺԸ. դարերու շինուած մը։ Ս. Ղազար մուտ գտած է բերեալ « Մարտինէ ի 1848, « ամին 29 19 ի Հ. Յովակիմայ »։

6.

Ս Բ Ճ Ա Գ Ա Ի Ա Թ

ԺԸ. ԴԱՐ (?)

Յախճապակեայ սկահակ սուրճի։ — Կա՛մ երմակ։ — Մեծօրիւն. շրջանակ 27, տրամագիծ 9 և խորութիւն 5. սնդ. — Հանգամանք՝ շատ լաւ։ — Գոյն յատակի՝ երմակ, ներքին եզերքը կապտածիր ու չափագիտական մանր պնդունքով կցորդուած. իսկ արտաքինը ցոյց կու տայ՝ ոսկեգոյն ճաճանչներէ պսակովը՝ խաչի ձև հագած քիչ մը տափակ բոլորակ մը, ուրուն մէջ քաշուած երկու ուղղահայեաց տրամագիծն ստեղծած են չորս խորշեր։ — Յիշատակագրութիւն. Նոյն չորս խորշերու իւրաքանչիւրին մէջ դրուած են հետեւեալ գրերէն մէկ մէկ հատ երկաթազիր. Թ Ֆ Վ Գ, որոնք անունի սկզբնաւորներն ըլլալու են գաւաթը գործածողին, հաւանաբար «վարդապետ» մը, քանի որ տարբերն մէկը Վ. և զրոշմանիշը խաչաձև։ — Գործատեղի՝ Կուտինա։ — Ժու մանուկ՝ ժ.Է. դարի վերջերը կամ ժ.Բ. ի սկիզբները։

7.


Թ Է Յ Ա Գ Ա Ի Ա Թ

1244 = 1795

Ճենսպոսիկե (porcelaine) թէյագաւաթ: — Մեծոքիւն. շրջանակ 32. տրամագիծ 10 $\frac{1}{2}$, և խորութիւն 5-5 $\frac{1}{2}$ սնդմ.: — Հանգամանք՝ գերազանց: — Գոյն ու ծաղիկ. ողորկ սպիտակ յատակի վրայ, ներսը նրբին երիզ մը, և խորքին՝ ճառագայթաձակ շրջանակ մը, որ կ'ամփոփէ զողորմիկ ծաղիկ մը, բոլորն ալ ոսկեգօծ լազուարթով գծուած: Արտաքին երեսին վրայ համանման երիզէ ետք զոյգ մը յանկուցիչ հայկական քոյր զինանշաններ: Ասոնց կեդրոնը կը բռնէ դաստակը. իսկ չորս անկիւնները՝ առիւծ, արծիւ, առիւծ ու ձուկ: Գատառառակին ճիշդ տակը նոյնան տապանը. այսպէսով այս երկուքը ընդդէմ սովորականին՝ փոխանակած կ'ըլլան իրենց տեղերը: Այս զինանշանը որ համակ ոսկեգօծ է, կը բռնուի երկկողման սարդիոնագոյն առիւծներէ և գաւաթին կողմէն խաչակիր թագէ մը: Այս կերպով ամբողջացած զինանշանը՝ որ արտաքին շրջանակ մըն ալ կը կրէ՝ շրջանակէն ներս՝ վրան կիսաբլրարած և պատկուած է զխաչգիր սա բառերով. « Նշանք քաղաքացե հայոց », իսկ դուրսը՝ տակը՝ « ԹՎԻՆ 1244 »: Հուսկ յետոյ շրջանակին երկու կողմն ալ մէկ մէկ քոսորագգեաց հրէշտակներ՝ իրենց զոյգ ոսկեգօծ թիւնակները առկախած և իրարու մէջ ձուլուած դէպ ի շրջանակին տակը երկարող իրենց մոյգ-կապոյտ ու ոսկեփայլ ձկնալիւն մարմիններով: Ասոնց դիմագիծերը ունին շնորհ, սիրունութիւն ու թովշութիւն:

Ս. Ղազարի խեցեղէններէն նախընթաց վեցը կը պատկանէին յաիւսպակեղարձուրեան (faïence), որ մեր մէջ դարաւոր

կեանքի բարգաւաճում մը ունեցած է Կուսինա և այլուր. բայց այս վերջինը որ ձեւապակեայ (porcelaine) է, բոլորովին գաղտնիք մը կը մնայ ինձ. իրաւ է թէ Կուսինանայ վերջին աւելոր վարպետէն՝ Հճ. Կարապետ Հճ. Մինասեանէ լսած եմ այս ճիւղին վրայ ալ փորձ մը ընելն ու յաջողելը, սակայն սոյն թէյագաւաթը՝ որ եւրոպական է՝ խստապահանջ գործարանի մը իսկ պատիւ բերելու աստիճան գերընտիր ձեռնակերտ մըն է՝ երբեք խնամութիւն չունի փորձի մը ձախաւերութիւններուն հետ: Մեր այն բանասէրներն ու արուես-



տագէտները՝ որ կը գտնուին հայկական ո՛ր և է տեսակէ խեցիներու աղբիւրներ, զանոնք ցուցակագրելով « ԲԱԶՄԱՎԵՊ » է շէքրուն մէջ, մեզի պատճառած պիտի ըլլան ո՛չ միայն մեծագոյն ուրախութիւնը, այլ նաև սատարումը՝ շատ մը մթութիւնները փաբատելու մինչև հիմա պահուըտած այս նրբագեղ Արուեստին, որուն ուսումնասիրութեան նախափորձերը կու տանք:

ԱՌՆԱԿ

Լիսաբո (Պատուա), 25 Մայիս 1923

